ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/178

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատական դեպարտամենտ
Մասնակից՝ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տ. Չալոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10894-2020 գրությամբ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.07.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-4661 գրության հիման վրա, 21.07.2020թ.-ին «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 21.07.2020թ.-ին:

22.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/178 համարի ծածկագիրը:

30.07.2020թ.-ին և 07.08.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.08.2020թ.-ին:

2. ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտը 13.07.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-4661 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ ներկայացվում են Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10894-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«1.1. Սույն թվականի Հուլիսի 2-ին Armeps .am կայքի միջոցով դիմել եմ ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար կազմակերպվող թիվ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար,

1.2. Հայտը ներկայացնելուց հետո պատվիրատուի կողմից 06.07.2020թ. էլեկտրոնային եղանակով ստացվել է ծանուցում տեղ գտած թերությունների մասին և առաջարկվել է շտկել դրանք: Թերությունները եղել են դիմում-հայտարարությունում և ծավալաթերթ-նախահաշվում,

1.3. Նշված թերությունները շտկվել են և կրկին ներկայացվել պատվիրատուին: Ընկերության կողմից գնային առաջարկը ընդհանուր առմամբ եղել է 8.301.998 /ութ միլիոն երեք հարյուր մեկ հազար, ինը հարյուր իննսունութ/ ՀՀ դրամ, որը շտկված ծավալաթերթում մնացել է անփոփոխ,

1.4. 08.07.2020թ. Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի նիստում որոշվել է «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ հայտը գնահատել անբավարար և մերժել շտկված ծավալաթերթ-նախահաշվի տողերում առկա թվաբանական անճշտությունների հիմքով,

1.5. 22.07.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից էլեկտրոնային եղանակով ստացվել է ծանուցում առ այն, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.07.2020թ. թիվ 26/26-1/10894-2020 գրությամբ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (այսուհետ Բողոքներ քննող անձ) ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Ծանուցմամբ տեղեկացվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ընթացակարգի առնչությամբ գրավոր դիրքորոշում ներկայացնելու անհրաժեշտության և ընթացակարգի քննության առաջին նիստի տեղի և ժամի մասին:

2.1. Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից,

2.2. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետությունն ... իրավական պետություն է:

2.3. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն. « ...Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով որպես անմիջականորեն գործող իրավունք:

2.4. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն. «Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:»

2.5. ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:»

2.6. ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն. «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:»:

2.7. Գնումների մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում գրված է, որ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

2.8. Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ... մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

2.9. Գնումների մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը

ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

... Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: ...

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ

անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած

հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր

ճանաչելու մասին որոշման,

գ. (ենթակետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-259-Ն)

որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

հաշվառում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

2.10. 08.07.2020թ. Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստում որոշվել է «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ հայտը գնահատել անբավարար և մերժել շտկված ծավալաթերթ-նախահաշվի տողերում առկա թվաբանական անճշտությունների հիմքով...:

2.11. Ըստ հանձնաժողովի հիշյալ շտկված ծավալաթերթ-նախահաշվով մասնակցի կողմից թույլ են տրված եղել ընդամենը մի քանի թվաբանական սխալներ / 5x5=20-ի մակարդակում/ որոնք ցանկացած օբյեկտիվ դիտորդի գնահատմամբ կբացատրվի որպես վրիպակ անուշադրության սխալ:

2.12. Սույն դեպքում հարցը հետևյալն է արդյոք ֆինանսների նախարարության նախաձեռնած ընթացակարգը հիմնված է բավարար հիմքերի վրա տնտեսվարող սուբյեկտին երկու տարով գնումների գործընթացից զրկելու պահանջ ներկայացնելու համար և արդյոք նման ենթադրյալ որոշումը համարժեք կլինի ընկերության կողմից 2.11 կետում նշված ձևական սխալի հետևանքը վերացնելու համար: Հարկ է նշել, որ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ նորաստեղծ ընկերություն է, որը իր գործունեության համար հիմր հանդիսացող պատվերները հայթայթում է նաև պետության կողմից կազմակերպվող գնումների ընթացակարգերին մասնակցելու միջոցով և հաշվի առնելով նաև ներկայումս կորոնավիուսային պանդեմիայով պայմանավորված համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, ընկերության նկատմամբ ֆինանսների նախարարության կողմից հայցվող որոշումը կայացնելու դեպրում էականորեն սահմանափակվերև/ եթե ոչ նպաստելու է դադարեցմանը/ է ընկերության գործունեությունը:

2.13. Բացի վերոգրյալ իրավիճակը հարկ ենք համարում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությանը ներկայացնել Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի դրույթները համաձայն, որոնց մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից,

Սույն հոդվածով նախատեսված որևէ խախտում ընկերության կողմից թույլ չի տրվել:

2.14. Գտնում ենք նաև, որ պատվիրատուն բավարար չափով պարզ ծանուցմամբ չի բացատրել մասնակիցներին ծավաչաթերթ-նախահաշվում տեղ գտած թերությունները շտկելու մասին, մասնավորապես 06.07.2020թ. էլեկտրոնային ծանուցմամբ պատվիրատուի կողմից մասնակիցներին տեղեկացվել է ծավալաթերթ նախահաշիվներում առկա թերությունները շտկելու մասին և տեղեկացվել, որ շտկումից հետո գնային առաջարկը պետք է համապատասխանի հայտով ներկայացված գնային առաջարկին ինչը ընկերության

դեպքում պահպանվել է. իսկ ինչ վերաբերվում է շտկման մանրամասներին և առանձնահատկություններին, ապա այդ մասին որևէ բացատրություն պատվիրատուի կողմից չի ներկայացվել և ընկերության կողմից շտկումները կատարվել են ըստ իրենց հայեցողության հաշվի առնելով միայն այն որ պատվիրատուն թերություն է համարել ծավալաթերթ նախահաշվի միայն վերջին «Ընդամենը» տողը լրացված լինելը:

2.15. Նման պայմաններում մասնակցի հայտը անբավարար գնահատելու և մերժելու հետ մեկտեղ նաև վերջինիս նկատմամբ գնումների ցործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգ նախաձեռնելը անհասկանալի է և անընդունելի:

2.16. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև հաշվի առնել այն, որ ընկերությունը նորաստեղծ է և գնումների գործընթացին մասնակցելու մեծ փորձ չունի, իսկ սույն ընթացակարգով առկա է եղել նաև ընկերության տնօրենի /ընթացակարգի հայտը, ցավալաթերթ-նախահաշիվը և այլ փաստաթղթեր ներկայացնելու պատասխանատուի/ վատառողջ լինելու հանգամանքը: Վերջինս քննարկվող ժամանակահատվածում վարակված է եղել կորոնավիրուսով և եղել է վատառողջ ինչն էլ որոշ չափով ազդել է շտկված ծավալաթերթ-նախահաշվում տեղ գտած թերությունների վրա,

2.17. Բացի վերը մեջբերված իրավակարգավորումներից, հարկ է նշել որ թիվ ՎԴ/2778/05/19 գործով վարչական դատարանը արձանագրել է /և այդ հիմքով հայցադիմումը վարույթ է ընդունել/, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգի քննության հարաբերությունները հանրային-իրավական են, իսկ կայացված որոշումը վարչական ակտ է և սույն ընթացակարգի պարագայում ՀՀ Ֆինանսների նախարարությունը հենց նմանատիպ վարչական ակտ ընդունելու խնդրանքով է նախաձեռնել ընթացակարգը:

2.18. Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության

իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

2.19. Վարչարարության հիմքունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

2.20. Վերոգրյալ իրավանորմերի և սույն գործով փաստերի համակարգված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նման որոշումը առնվազն պետք է

Ա. անհամաչափ չսահմանապակեն անձի հիմնական իրավունքները,

Բ. լինեն պատճառաբանված հիմնավոր և համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին,

Գ. Կայացված որոշումը պետք է լինի համարժեք ենթադրյալ իրավախախտմանը:»:

Վերոգրյալը հաշվառմամբ, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության 21.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10894-2020 գրությամբ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-LO-2020/178 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 25.06.2020թ.-ին հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն:

ii. «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտնել է,

որ ցանկություն ունի մասնակցել Դատական դեպարտամենտի կողմից «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Ինչպես նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.07.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.5 կետի համաձայն՝ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ.

ա) Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ Հավելված 1, աղյուսակից հետո գրված նախադասությունն ավելորդ է,

բ) Ծավալաթերթ-նախահաշիվն ամբողջությամբ լրացված չէ՝ լրացված է միայն վերջին՝ Ընդամենը տողը:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով, ծանուցել համապատասխան մասնակիցներին՝ առաջարկելով մինչև 2020 թվականի հուլիսի 07-ը ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի 08.07.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.2.3 կետի համաձայն՝ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված շտկված Ծավալաթերթ-նախահաշվի տողերում առկա են թվաբանական անճշտություններ: Ինչի հիմքով, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

vi. «Երանոսի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի կողմից 28.07.2020թ.-ին տրամադրված ամբուլատոր քարտի քաղվածքի համաձայն՝ տրվում է Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի բնակիչ Տարոն Հովհաննեսի Չոլոյանին (ծնված 1990թ.) առ այն, որ նա հիվանդացել է կորոնավիրուսային վարակի միջին ծանրության ձևով և բուժվել է ամբուլատոր 06.07.20թ.-28.07.20թ.: Նմուշառումը կատարվել է 13.07.2020թ.:

vii. «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ի ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցամատյանի քաղվածքի համաձայն՝ Գործադիր մարմնի

ղեկավարի՝ տնօրենի անվանում նշված է՝ Տարոն Զոլոյան Հովհաննեսի, հասցեն՝ Երանոս, Գեղարքունիք, Հայաստան:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10894-2020 գրությամբ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է **մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե

օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 25.06.2020թ.-ին հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ Հավելված 1, աղյուսակից հետո գրված նախադասությունն ավելորդ է,

բ) Ծավալաթերթ-նախահաշիվն ամբողջությամբ լրացված չէ՝ լրացված է միայն վերջին՝ Ընդամենը տողը:

Վերոգրյալների հաշվառմամբ, Հանձնաժողովը որոշել է հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով, ծանուցել համապատասխան մասնակիցներին՝ առաջարկելով մինչև 07.07.2020թ.-ը ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից ներկայացված շտկված Ծավալաթերթ-նախահաշվի տողերում կրկին արձանագրվել են թվաբանական անճշտություններ: Ինչի հիմքով, Հանձնաժողովը որոշել է «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, հավաստում է այն մասին, որ Մասնակցի կողմից 07.07.2020թ.-ին Հանձնաժողովին ներկայացրած Ծավալաթերթ-նախահաշվի ամբողջական շտկված տարբերակի որոշակի անհամապատասխանություններով ներկայացնելը պայմանավորված է եղել Մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի՝ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի բնակիչ Տարոն Հովհաննեսի Չոլոյանի կորոնավիրուսային վարակի միջին ծանրության ձևով 16.07.2020թ.-ին հիվանդանալու և շտկումը ներկայացնելու պահին բուժման մեջ գտնվելու հանգամանքներով՝ հիմք ընդունելով «Երանոսի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի կողմից 28.07.2020թ.-ին տրամադրված ամբուլատոր քարտի քաղվածքի տեղեկատվությունը:

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և

գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Ընդ որում, Մասնակցի կողմից 07.07.2020թ.-ին Հանձնաժողովին ներկայացրած Ծավալաթերթ-նախահաշվի ամբողջական շտկված տարբերակի որոշակի անհամապատասխանություններով ներկայացնելու հանգամանքի հավառմամբ, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար, անհրաժեշտ ժամկետի ընթացքում, ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված հնարավոր չի եղել դրանք հասցնել իր տրամաբանական ավարտին:

Ուստի, նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված պատասխանատվությունը չի կարող վրա

հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10894-2020 գրությամբ «Արմշին Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/178 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**